Զեկույց

ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության
2017թ. գործունեության մասին

Ձեզ է ներկայացվում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ենթակա ստորաբաժանումների կողմից 2017 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունը ստեղծվել է 2008 թվականին: Վարչության կազմում ընդգրկված են ճգնաժամային կառավարման կենտրոնը, բնակչության պաշտպանության բաժինը, Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի հրշեջ փրկարարական ջոկատները:
Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության անձնակազմը բաղկացած է 116 փրկարարներից, 2 քաղաքացիական ծառայողներից և 3 տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներից:
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կողմից 2017 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական միջոցառումները.

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց ձորի մարզպետարանի, մարզի համայնքների և մարզում գործող համապատասխան կազմակերպությունների հետ համատեղ մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անցկացվել են օբյեկտային վարժանքներ, հրամանատարաշտաբային, շտաբային և հատուկ-տակտիկական ուսումնավարժություններ:
Բոլոր անցկացրած միջոցառումներն ընդգրկել են ինչպես քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների հիմնարար հարցերը, այնպես էլ մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման խնդիրները:
Վայոց Ձորի մարզպետի կողմից հաստատված <<Վայոց ձորի մարզի բնակչութան պաշտպանութան և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017թ. հիմնական միջոցառումների պլան>>-ի շրջանակներում մարզային փրկարարական վարչության ենթակա անձնակազմի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հանձնարարականով 35 հանրակրթական դպրոցներում ուսուցչական կազմի և աշակերտների մասնակցությամբ անցկացվել են դասախոսություններ, իսկ 10 դպրոցներում <<<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում պատսպարման իրականացումը>> թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:
- ՀՀ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ մարզի 6 բարձրագույն, միջնակարգ մասնագիտական, հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են <<Հրդեհի դեպքում հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացումը>> թեմայով հատուկ տակիտիկական ուսումնավարժություններ,

- իսկ 10 ուսումնական հաստատություններում <<ՀՀ ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները>> թեմայով դասախոսություններ:

- Վայոց ձորի մարզի տարածքում գործող թվով 7 կազմակերպությունների կողմից, որոնք են՝ Եղեգնաձորի <<ՃՇՇ>> ՓԲԸ, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Եղեգնաձորի և Վայքի տարածքային տեղամասերը, <<ՀԷՑ>> ՓԲԸ Եղեգնաձորի տեղամասը, <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ Եղեգնաձորի տեղամասը և Վայքի <<ՃՇՇ>> ՓԲԸ, մարզային փրկարարական վարչության անձնակազմի մասնակցությամբ անցկացվել են տարբեր թեմաներով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:
- Մարզային փրկարարական վարչության համապատասխան աշխատակիցների կողմից և մասնակցությամբ մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի համայնքներում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացված թվով 20 շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստմանը և անցկացմանը:
- Եռամսյակը մեկ անգամ մարզային փրկարարական վարչությունում Վայոց ձորի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների, որոնք են՝ հասարակական կարգի պահպանման, ազդարարման, կոմունալ տեխնիկական, բժշկական, տրանսպորտային, առևտրի և սննդի, նյութատեխնիկական մատակարարման, էներգետիկայի և լուսաքողարկման, բույսերի և կենդանիների պաշտպանության, շտաբների պետերի հետ անցկացվել են հրամանատարական պատրաստության պարապմունքներ:
- Ջերմուկ քաղաքի <<Օլիմպիա>>, <<Արմենիա>> և <<Արարատ>> մոր և մանկան առողջարաններում մարզային փրկարարական վարչության համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ անցկացվել են <<Ուժեղ երկրաշարժի դեպքում հանգստացողների պաշտպանության կազմակերպում>> թեմայով օբյեկտային վարժանքներ:
- Հաշվետու ժամանակաշրջանի հունիսի 7-ին Վայոց ձորի մարզում, մասնակցությամբ՝ մարզպետարանի, մարզի տարահանման հանձնաժողովի, քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների, Եղեգնաձոր, Արենի, Խաչիկ և Գլաձոր համայնքների ղեկավարների, անցկացվել է <<Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը մարզի քաղ. պաշտպանության համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման ժամանակ>> թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն:
- Հաշվետու ժամանակաշրջանի հունիսի 7-ին Վայոց ձորի մարզի Արենի համայնքում անցկացվել է նաև «ՀՀ Վայոց ձորի մարզի տարահանման մարմինների ծավալում (տարահանման/ընդունման հավաքակայանների, ժամանակավոր տեղակայման և երկարատև բնակության կետերի ստեղծում) և բնակչության պատսպարման կազմակերպում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:
- Հաշվետու ժամանակաշրջանի սեպտեմբերի 7-ին Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում՝ ուսուցչական և աշակերտական կազմի, շտապ օգնության և գազի ծառայությունների աշխատակիցների մասնակցությամբ, Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատի փրկարարների կողմից անցկացվել է «Ուժեղ երկրաշարժի հետևանքով կիսաքանդ շենքում որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:

- Հաշվետու ժամանակահատվածի հոկտեմբերի 25-ին Վայոց ձորի մարզպետի, մարզպետի տեղակալի, Չիվա և Ռինդ համայնքների ղեկավարների, արտակարգ իրավիճակների, տարահանման հանձնաժողովների անդամների և մարզային փրկարարական վարչության անձնակազմի մասնակցությամբ մարզպետարանում անցկացվել է <<Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը սողանքի դեպքում>> թեմայով շտաբային ուսումնավարժություն:
- Ի կատարումն ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, փ/ծ գեներալ-մայոր Մ. Ղազարյանի կողմից հաստատված՝ պլանի, հաշվետու ժամանակահատվածի մայիսի 25-ին և նոյեմբերի 22-ին Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետի ղեկավարությամբ փրկարարական ծառայողների հետ անցկացվել են <<ՄՓՎ անձնակազմի գործողությունները տարահանման միջոցառումների իրականացման դեպքում՝ խաղաղից ռազմական դրության անցման ժամանակ>> և <<ՄՓՎ անձնակազմի գործողությունները ուժեղ երկրաշարժի դեպքում>> թեմաներով շտաբային ուսումնավարժություններ:
- Հաշվետու ժամանակահատվածում Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կողմից մշակվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի թվով 6 որոշման նախագծեր:

- Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության գործունեության վերաբերյալ ղեկավարության կողմից բացթողումներ և թերություններ չեն արձանագրվել:

Բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման ուղղությամբ կազմակերպվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Համայնքների հետ համագործակցության արդյունքում ստացված տեղեկատվությունների հիման վրա մշակվել և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչություն են ներկայացվել 2017թ. հնարավոր գարնանային վարարումների և սելավների ռիսկերից Վայոց ձորի մարզի բնակավայրերը, գյուղատնտեսական հողատեսքերը, տնտեսական արժեքներ ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկություններ:
- Մարզային փրկարարական վարչության մասնագետների կողմից Ագարակաձոր, Քարագլուխ, Եղեգիս համայնքներում, Մ-2 Չիվա-Ռինդ մարզային նշանակության ավտոճանապարհի 4-րդ կմ-ի երկու հատվածներում և հարակից լանջերին նկատված սողանքային երևույթների վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն, լուսանկարվել է և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության համապատասխան վարչություն են ներկայացվել առաջարկություններ:
- Վայոց Ձորի մարզպետի կողմից հաստատված <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության>> պլանում կատարվել են ամենամյա նախատեսված ճշգրտումներ:
- Աշխատանքներ են տարվել Եղեգնաձորի և Վայքի ՃՇՇ-ների արտակարգ իրավիճակներում գործելու պլանների ճշգրտման ուղղությամբ:
- Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի կողմից մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի ուսումնական հաստատություններին <<Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու>> պլանների մշակման ուղղությամբ:

- Առաջարկություններ են ներկայացվել ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության համապատասխան վարչություն մարզի տարածքում գարնանային վարարումների ժամանակահատվածում գետերի հոսքերի (ջրամբարներում ջրի մակարդակի) տվյալների հավաքագրման, վերլուծության և հրատապ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:
- Մեթոդական օգնություն է ցուցաբերվել Վայոց ձորի մարզի համայնքներին՝ <<Համայնքների անձնագրերի>> մշակման գործընթացի ուղղությամբ:
- Աշխատանքներ են տարվել Վայոց ձորի մարզում հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վերաբերյալ տվյալների ճշգրտման և քարտեզագրման ուղղությամբ: Տվյալները ներկայացվել են ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչություն:
- ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության համապատասխան վարչություն են ներկայացվել տվյալներ Վայոց ձորի մարզի ավտոմոբիլային ճանապարհների և դրանց սպասարկող կազմակերպությունների վերաբերյալ:
- Ճգրտվել և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության համապատասխան վարչություն է ներկայացվել Վայոց ձորի մարզում առկա էլեկտրահաղորդման ցանցերի և գծերի, գազամատակարարման գծերի և օբյեկտների, ինչպես նաև մարզում առկա ջրամատակարարման համակարգերի, ջրատարների, ջրմուղի ցանցերի և կառուցվածքների վերաբերյալ տեղեկատվությունը:
- ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության համապատասխան վարչություն է ներկայացվել Վայոց ձորի մարզում ԱԻ հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասները գնահատող մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության մասնագետների կողմից ուսումնասիրվել է Աղավնաձոր համայնքում չգործող լողավազանի կաթսայատան ծխատար խողովակի վիճակը, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է փրկարար ծառայության համապատասխան վարչություն:
- Մարզի կենսական ցանցերին սպառնացող քարաթափման տեղամասերի և լանջերի քայքայման կանխման ուղղությամբ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ կատարվել են ճշգրտումներ և փրկարար ծառայության համապատասխան վարչությանը ներկայացվել տեղեկատվություն:
- Կենսաապահովման պլանների մշակման, ինչպես նաև <<Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման պլան>>-ների մշակման ուղղությամբ համայնքներին ցուցաբերվել է մեթոդական օգնություն:

  Հաշվետու ժամանակահատվածում մշտական աշխատանքներ են իրականացվել փրկարարական ուժերի մարտական պատրաստականության բարձրացման ուղղությամբ:
- Վայոց ձորի մարզային փրկարարական վարչությունում ստեղծվել է ուսումնական խումբ և համաձայն հաստատված դասացուցակի յուրաքանչյուր ամիս անց են կացվել պարապմունքներ: Առավել ուշադրություն է դարձվել գործնական ունակությունների ձևավորմանն ու կատարելագործմանը, անձնակազմի մասնագիտական գիտելիքների, բարոյահոգեբանական վիճակի և ֆիզիկական պատրաստության բարձրացմանը:
- ՄՓՎ ենթակա ստորաբաժանումներում, հատկապես հրշեջ-փրկարարական ջոկատներում ամեն ամիս յուրաքանչյուր հերթափոխի հետ անց են կացվել հրշեջ մասնագիտական և շարային պատրաստության պարապմունքներ, իսկ մարզի կարևորագույն և վտանգավոր դասակարգվող օբյեկտներում եռամսյակը մեկ անգամ հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

- Աշխատանքներ են տարվել հրդեհաշիջման օպերատիվ պլանների և քարտերի թարմացման ուղղությամբ:
  -Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ղեկավար կազմը հաշվետու ժամանակահատվածի մայիսի 16-ին Վայոց Ձորի մարզպետարանում մասնակցել է <<Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ու զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների փոխգործակցությունը մարզը խաղաղից պատերազմական ժամանակահատվածի փոխադրման ժամանակ>> թեմայով շտաբային ուսումնավարժությանը:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանութան միջոցառումների կազմակերպման վարչություն է ներկայացվել մարզի պահեստային կառավարման կետի բացազատման վերաբերյալ տվյալները:
- Վայոց ձորի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետները մարզային հանձնաժողովի կազմում մասնակցել է մարզի 8 համայնքներում կատարված վարչական հսկողության աշխատանքներին:
- Ճշգրտվել և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ քաղ. պաշտպանության վարչություն մարզում առկա պահեստային կառավարման կետերի վերաբերյալ:
- Մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի կողմից ուսումնասիրվել և զեկույց է ներկայացվել ՀՀ ԱԻՆ ՓԾ քաղ. պաշտպանության վարչություն՝ մարզում առկա հակաճառագայթային թաքստոցների ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի համապատասխանության վերաբերյալ:
- Ճշգրտվել են մարզի համայնքների և մարզում գործող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանները:
- Ճշգրտվել են մարզի <<Քաղաքացիական պաշտպանության>> և <<Բնակչության տարահանման>> պլանները:
- Ճշգրտվել և ՀՀ ԱԻՆ ՓԾ քաղ. պաշտպանության վարչություն են ներկայացվել մարզի բնակչության պատսպարման հաշվարկները:
- Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի կողմից ճշգրտվել են մարզի սահմանամերձ բնակավայրերի ճանապարհներով տարահանման երթուղիների վերաբերյալ տվյալները:

Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվող վարչական տարածքում 2017 թվականի ընթացքում գրանցվել է 422 արտակարգ դեպք-պատահար/ 2016թ. հաշվետու ժամանակահատվածի 426 դեպք-պատահարի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում դեպք-պատահարների քանակը նվազել 4-ով կամ 0.9 %-ով,

Մարզում տեղի ունեցած դեպք-պատահարների արդյունքում զոհվել է 8 անձ /2016թ. 9 անձ, արտակարգ իրավիճակների արդյունքում մարմնական վնասվածքներ են ստացել կամ տուժել 95 մարդ / 2016թ. 124-ի դիմաց:

- Արտակարգ դեպքերի, հրդեհների հետևանքով քաղաքացիներին պատճառած ընդհանուր նյութական վնասը կազմել է 10 071 500 ՀՀ դրամ / 2016թ. 10 813 000 ՀՀ դրամի դիմաց:

Մարզում տեղի ունեցած 422 արտակարգ դեպք-պատահարներից՝

- **230-ը տեխնածին են**, որը կազմում է ընդհանուր քանակի 54.5 %-ը /2016թ. 218-ի դեպք-պատահարի դիմաց, որոնց հետևանքով զոհվել են 6 (2016թ. 4-ի), վիրավորվել են 77 քաղաքացիներ (2016թ. 101-ի):

  Տեխնածին բնույթի արտակարգ դեպքերը ավելացել են 12-ով կամ 5.2 %-ով իսկ վիրավորների թիվը նվազել է 24-ով:

- Տեխնածին աղետների պատճառած նյութական վնասը կազմել է 10 071 500 ՀՀ դրամ /2016թ. 10 813 000 ՀՀ դրամի դիմաց:
- Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերից՝ **73-ը տարերային են**, որը կազմում է ընդհանուր դեպք-պատահարների քանակի 17.3 %-ը /2016թ. 109-ի դիմաց: Տարերային աղետների թիվը նվազել է 36-ով կամ 49.3 %-ով: Տարերային աղետների հետևանքով զոհեր և վիրավորներ չեն եղել:

  Հաշվետու ժամանակահատվածում հաշվառված դեպքերի ընդհանուր քանակից **119-ը սոցիալ-կենցաղային են**, որը կազմում է ընդհանուր քանակի 28.2 %-ը / 2016թ. 99 դեպքի դիմաց: Սոցիալ-կենցաղային բնույթի արտակարգ դեպքերը ավելացել են 20-ով կամ 16.8 %-ով:

  Սոցիալ-կենցաղային դեպքերի հետևանքով տուժել են 2 քաղաքացիներ / 2016թ. – 21 անձ, զոհվել են 2 քաղաքացիներ / 2016թ. 5 զոհ:

- Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնում հաշվետու ժամանակաշրջանում, գրանցվել է 28668 զանգ (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 26005), սպասարկվել է 1706 զանգ, (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 1420) որից 169-ը՝ տարաբնույթ արտակարգ դեպքերի, պատահարների վերաբերյալ ահազանգ (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 202):
- ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների և օպերատիվ խմբերի կողմից արտակարգ դեպքերի, պատահարների հետևանքների վերացման նպատակով իրականացվել են՝ 489 ելք, (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 474), որից հրդեհների մարման նպատակով 177 ելք (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 150), փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով՝ 312 ելք (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 324):
- Հրդեհների մեկնումների 20 դեպքերում հրդեհներ չեն արձանագրվել (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 13): Ելքերի 3 դեպքերում գրանցվել են կեղծ կանչեր (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 3):
- Վերլուծությունները ցույց են տալիս, որ հրդեհների զգալի մասը՝ 114-ը կամ 74 %-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 93, կամ 81.5 %-ը) առաջացել են բուսածածկ տարածքներում: 2016թ. համեմատ դեպքերի քանակը աճել է 21 դեպքով, կամ 18.4 %-ով:
- Բնակելի հատվածում առաջացել է 31 հրդեհ, որը կազմում է հրդեհների 20.1 %-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատված.՝ 35): 2016թ. համեմատ դեպքերի քանակը նվազել է 4 դեպքով, կամ 12.9 %-ով:
- Տրանսպորտային միջոցներում առաջացել է 9 հրդեհ, որը կազմում է հրդեհների 5.8 %-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատված՝ 6): 2016թ. համեմատ դեպքերի քանակը աճել է 3 դեպքով, կամ 33.3 %-ով:
- Հաշվետու ժամանակահատվածում հրդեհները մարվել են թիվ 59, 60 և 61 ՀՓՋ-ների կողմից՝ համապատասխանաբար 88, 14, 52 դեպք:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել կադրերի ընտրության ուղղությամբ:

- Մարզային փրկարարական վարչությունում փրկարար ծառայության են անցել 9 քաղաքացիներ, ազատվել է 6 փրկարար ծառայող և 1 տեխնիկական սպասարկում իրականացնող (հիմնականում ծառայության սահմանային տարիքը լրանալու պատճառով):

- Հաշվետու ժամանակահատվածում 1 փրկարար ծառայող պարգևատրվել է <<Անվեհեր փրկարար>> մեդալով, 6 փրկարար ծառայողներ պարգևատրվել են՝ պատվոգրերով, իսկ 3-ը՝ շնորհակալագրերով:
- ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրեն, փ/ծ գեներալ-մայոր Մ. Ղազարյանի կողմից Անբասիր ծառայության համար 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանների մեդալներով են պարգևատրել Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության և հրշեջ փրկարարական ջոկատների 42 փրկարար ծառայողներ:
- ԵԿՄ վարչության և հատուկ քննչական ծառայության կողմից երկու փրկարար ծառայողներ պարգևատրվել են մեդալներով, 2 փրկարար ծառայողներ պարգևատրվել են <<Անվեհեր փրկարար և Լավագույն հրշեջ փրկարար>> մեդալներով, իսկ ԱԻ աշխատողի օրվա՝ սեպտեմբերի 4-ի կապակցությամբ, Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Տ. Պետրոսյանը, Վայքի հրշեջ փրկարարական ջոկատի հերթափոխի պետ, փ/ծ ենթասպա Ա. Ավագյանը և Ջերմուկի հրշեջ փրկարարական ջոկատի հրշեջ, փ/ծ սերժանտ Մ. Գալստյանը Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից պարգևատրվել են <<Երախտագիտություն>> մեդալներով:

Հաշվետու ժամանակահատվածում մարզային փրկարարական վարչությունը ՀՀ ԱԻ նախարարի հրամանով, փրկարար ծառայության ղեկավարության և Ռուս-Հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կողմից համալրվել է բազմաթիվ փրկարարական գույք-սարքավորումներով, որոնք են՝ հրշեջ մոտոպոմպ, էլեկտրակայաններ, հիդրավլիկ փրկարարական գործիքների լրակազմ, տուժածի հայտնաբերման սարք, լուսային աշտարակ, 1000 և 1500լիտր ծավալով ջրի բաքեր, շնչառական ապարատներ, վրաններ:

Մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնին և Վայքի հրշեջ փրկարարական ջոկատին դեպք-պատահարներին արագ և արդյունավետ արձագանքելու համար, մարզային փրկարարական վարչության պետի հրամանով ամրակցվել են փրկարար ծառայության ղեկավարության կողմից հատկացված ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենաներ, իսկ Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատում մարտական հաշվարկի է դրվել ամբողջությամբ նոր Կամազ մակնիշի հրշեջ ավտոմեքենա:

Մարզային փրկարարական վարչության կողմից ամբողջությամբ կատարվել են <<Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017թ. հիմնական միջոցառումների>> և <<Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության 2017թ. աշխատանքային>> պլաններով նախատեսված միջոցառումները:

Մարզային փրկարարական վարչության և ենթակա ստորաբաժանումների անձնակազմը գտնվում է մարտունակ վիճակում և պատրաստ է լուծել իր առջև դրված բոլոր խնդիրները: